Արձանագրություն N 3
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/57» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

26.02.2020թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մկրտչյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Զեյնալյան, Հ. Բաբաջանյան, Ժ. Բալաբանյան, Ա. Ավետիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Վ.Մեժունց

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/57» ծածկագրով գնման ընթացակարգին պարզաբանման մասին հայտարարություն

(Ա. Մկրտչյան)

Հարգելի գործընկեր, ի պատասխան Ձեր պարզաբանման հարցմանը՝

Հարգելի պատվիրատու: Գնումների կարգի վերաբերյալ կառավարության վերջին որոշման արդյունքում 10 միլիոն դրամը գերազանցող պայմանգրերի կնքելու համար պահանջվող բանկային երաշխիքների պահանջի հետևանքով ընթացակարգերի հնարավոր մասնակիցների քանակը խիստ կրճատվել է, որի արդյունքում չի ապահովվում Գնումների օրենքով սահմանված լայն մասնակցության և հնարավորինս տնտեսող արդյունք ապահովելու պահանջները:

Սույն գնման ընթացակարգի չափաբաժիններից մի մասի ընդհանուր գումարը ապրանքների ընդհանուր քանակը համար վստահաբար գերազանցելու է 10 միլիոն ՀՀ դրամի սահմանը: Քանի որ հրավերով մատակարարումները նախատեսվում են կատարել փուլերով, ապա ավելի լայն մասնակցություն ապահովելու՝ հետևաբար նաև բյուջետային միջոցների տնտեսելու նպատակով, առաջարկում ենք ընթացակարգը հայտարարել յուրաքանչյուր փուլի համար առանձին-առանձին: Բացի դրանից, քանի որ ընթացակարգի չափաբաժինների քանակը մեծ է և հավանականությունը մեծ է, որ մեկ մասնակցի առաջարկի ընդհանուր գումարը մի քանի չափաբաժինների համար կարող է գերազանցել 10 միլիոն դրամի սահմանը, ապա առաջարկում ենք հայտարարել առանձին-առանձին ընթացակարգեր այնպես, որ մեկ ընթացակարգով նախատեսված ապրանքների գումարը չգերազանցի 10 միլիոն ՀՀ դրամի սահմանը: Այս դեպքում նույնպես հնարավորություն կստեղծվի ապահովել ավելի լայն մասնակցություն և հետևաբար բյուջետային միջոցների ավելի մեծ տնտեսում:

Հայտնում ենք՝

Ի պատասխան Ձեր կողմից պահանջված պարզաբանման

Գնումների մասին օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

Հանձնաժողովի նախագահ՝		Ա. Մկրտչյան
Անդամներ՝		Վ. Զեյնալյան
		Հ. Բաբաջանյան
		Ժ. Բալաբանյան
		Ա. Ավետիսյան
Համակարգող՝		Վ. Մեժունց